Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Ռուսաց լեզու

Թեմա՝ Բուլլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչ՝ Անուշ Ստեփանյան

2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Ինչ է բուլլինգը----------6

Բուլլինգի տեսակները----------8

Բուլլինգի սոցիալական կառուցվածքը----------10

Արդյունքների վերլուծություն----------12

Եզրակացություններ----------15

Օգտագործված գրականության ցանկ----------16

Ներածություն

Երեխաների կյանքի, նրանց զարգացման, դաստիարակության և կրթության համար բարենպաստ պայմանների ստեղծման հետ զուգընթաց բռնությունները և ճնշող վարքային դրսևորումները համարվում են սոցիալական պետական քաղաքականության հիմնախնդիրը: Երեխայի նկատմամբ ցանկացած բռնություն չունի արդարացում: Սակայն ամբողջ աշխարհում մեծացող սերունդը բախվում է բռնության հետ ընտանիքում, հասարակության մեջ և ուսումնական հաստատություններում: Ֆիզիկական բռնությունը ավելի տեսանելի և դատապարտելի է, իսկ սոցիալ-հոգեբանական բռնության բազմաթիվ դրսևորումներ (պիտակավորում, վիրավորանք, ծաղր, հայհոյախոսություն, կոպտախոսություն, բամբասանքներ, բացառում և այն), որոնք միավորվել են bullying տերմինի ներքո, ավելի քիչ դատապարտելի են հասարակության կողմից, ավելի դժվար չափելի են, իսկ բացահայտման և կանխարգելման մեխանիզմները թե՛ օրենսդրական ակտերի բովանդակության, թե՛ դրանց կիրարկման մակարդակում ևս հստակսահմանվածչէ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ մեր դպրոցում դեռահասների վաղ շրջանում ուսումնասիրված չէ բուլլինգի թեման: Իսկապես դեռահասության շրջանում շատ անչափահասների մոտ դժվարություններ են առաջանում, կոնֆլիկտներ, բայց այս բազմաթիվ խնդիրների շարքում հատուկ տեղ է զբաղեցնում բուլլինգը: Դեռահասության բուլլինգը սովորական վեճ կամ ճնշումչէ, այլ բռնություն, ստորացում, որը երկարատև կարգավիճակ է ստանում տվյալ անձի նկատմամբ: Մեր հետազոտության կարևորությունը պայմանավորված է հատկապես դեռահասության տարիքի շեմում, մասնավորապես 6-րդդասարանում, բռնության /բուլլինգի/ դրսևորումների, դրանց կանխարգելման և հաղթահարման ուղիների ուսումնասիրության անհրաժեշտությամբ, քանի որ այդ տարիքում երեխաները հատկապես խոցելի են՝ պայմանավորված սեռական հասունացման, սոցիալականացման հետ կապված խնդիրներով:

Բուլլինգի կանխարգելումը համարվում է հասարակության գլխավոր խնդիրը, քանի որ երեխայի հանդեպ դաժանությունը բերում է հասարակության հանդեպ դաժանության: Դպրոցն այն առաջնային օղակն է, որտեղ ինտենսիվորեն ձևավորվում են երեխաների սեփական անձի, կյանքի նպատակների և աշխարհի մասին պատկերացումները: Այս առումով, հանրակրթության որակը ոչ միայն կրթության հասանելիությունը, բովանդակությունը և պատշաճ նյութատեխնիկական բազայի առկայությունն է, այլև անվտանգ հոգեբանական միջավայրը, որտեղ աշակերտը զերծ է ցանկացած բռնությունից և հնարավորություն ունի լիարժեք օգտագործել իր անձի զարգացման այդ կարևոր տարիները: Հակառակ դեպքում բուլլինգը կարող է վերածվել մոբինգի, իսկ վերջինս կնպաստի սկուլշուտինգի առաջացմանը: Բուլլինգը կամ ճնշումը անկիրթ ու սովորաբար ճնշող-բացասական վարքային դրսևորումներն են, երբ անհատը կամ խումբը միտումնավոր թիրախավորում են մեկ այլ անձի՝ պաճառելով նրան շարունակական ֆիզիկական և/կամ հուզական վնաս: Բուլինգը համարվում է ուժի չարաշահում, ագրեսիայի տեսակ, որը կարող է լինել ֆիզիկական, հուզական կամ վերբալ և կարող է իրականանալ անմիջական շփման ընթացքում կամ հեռավար հաղորդակցման ընթացքում:

Հետազոտության նպատակը դպրոցական միջավայրում (6-րդ դասարանում) բուլլինգի երևույթի առկայության կամ բացակայության ուսումնասիրությունն է և բուլինգի կանխարգելման ռազմավարությունների սահմանումը:

Մեր նպատակի իրականացմանն է ուղղված հետևյալ առանցքային կոմպետենցիան /կարողունակությունը/.

Ø Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն: (Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից,արտաքին տեսքից, ընդունակություններից և այլ

առանձնահատկություններից):[1]

Հետազոտության ընթացքում դրվել են հետևյալ խնդիրները՝

- տալ **<<**բուլլինգ**>>** հասկացության սահմանումը և բուլինգի հետևանքները, օգտագործելով ինֆորմացիայի փնտրման մեթոդը,
- ներկայացնել բուլլինգի տեսակները,
- ներկայացնել բուլլինգի սոցիալական կառուցվածքը
- 6-դդասարանցիների շրջանակում անկետավորման մեթոդի հիման վրա ուսումնասիրել բուլլինգի՝ հաճախականության աստիճանը,
  - ավելի շատ հանդիպող տեսակը,
  - վայրը,
  - թիրախը,
  - վարքային դրսևորումը (բուլլինգի ենթարկվելուց հետո):

[1]https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510

Ինչ է բուլլինգը

Փաստացի յուրաքանչյուր դասարանում կան երեխաներ, ովքեր ենթարկվում են պիտակավորման, վիրավորանքի, ծաղրի և այլն: Վերջին ժամանակներս ավելի հաճախակի են սկսել խոսել դրա մասին, քանի որ ծանր հետևանքների է հանգեցնում այս երևույթը: Դպրոցական բռնությունները ավելի տրավմատիկ են դարձել այն պատճառով, որ այդ դրվագները շատ հեշտությամբ տեսանկարահանվում են և տարածվում ամբողջ դպրոցում կամ ինտերնետում:

Դպրոցական բռնությունը, կամ բուլլինգը (անգլ. bullying, bully - կովարար) անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալսահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցյալ:

Բուլլինգը մասայական երևույթ է, իսկ դպրոցում իրականացվող բուլինգը դա միայն երևույթի տարածվածության օրինակ է: Այս տերմինը առաջացել էմեծահասակների կոլեկտիվի ուսումնասիրության ընթացքում: Ըստ երևույթի բռնությունը զարգանում է ցանկացած փակ խմբակներում, լինի դա բանակային ստորաբաժանում կամ էլիտ քոլեջ:

Կարելի է առանձնացրել բուլինգի առկայության ցուցանիշներ (հետևանքներ)՝

- ✓ Դպրոցից գնալու ցանկության պակաս,
- ✓ Ֆիզիկական, մարմնական բողոքներ,
- ✓ Կապտուկներ ու քերծվածքներ,
- ✓ Գլխացավ, փորացավ,
- ✓ Քնի և ախորժակի խանգարումներ,
- ✓ Հուզական բացասական դրսևորումներ,

- ✓ Մեկուսացվածություն,
- ✓ Դյուրագրգռություն
- ✓ Կորած կամ վնասված իրեր,
- ✓ Ակտիվություններում ներգրավելու ցանկության պակաս,
- ✓ Ընկերների պակաս կամ բացակայություն,
- ✓ Առաջադիմության անկում,

Դպրոցում անհրաժեշտ է հաճախ և ազատ խոսե՛լ աշակերտների հետ դպրոցում իրենց անցկացրած ժամանակի մասին՝ հետաքրքրվելով ոչ միայն դասերով և կոնկրետ գործողություններով, այլև նրանց զգացմունքներով, խոսել այն մասին, թե որն է իրենց կարծիքով դպրոցում, փողոցում, բակում և առցանց լավ ու վատ վարքը: Անկաշկանդ հաղորդակցություն ունենալը կարևոր է, որպեսզի աշակերտները իրենց հանգիստ զգան իրենց կյանքի մասին պատմելուց:

Երեխաները չափահասներից, հատկապես ծնողներից և ուսուցիչներից են օրինակ վերցնում, հարկավոր է ուշադիր լինել ու հետևել՝ ինչպես վերաբերվել այլ մարդկանց և ինչպես ձեզ պաշտպանել:

Բուլլինգի տեսակները

Այսպիսով, «ոչ մի խնդիր չի կարող լուծվել այն հետևանքներով, որոնց պատճառով առաջացել է խնդիրը»: Բուլլինգը կամ ճնշումը անկիրթ ու սովորաբար ճնշող-բացասական վարքային դրսևորումներն են՝ մի անձի առավելությունն ու ուժը մեկ այլ անձի հանդեպ վախեցնելով և ճնշելով ցուցադրելու համար: Այն իրավիճակները, երբ անհատը կամ խումբը միտումնավոր թիրախավորում են մեկ այլ անձի՝ պաճառելով նրան շարունակական ֆիզիկական և/կամ հուզական վնաս: Բուլլինգը համարվում է ուժի չարաշահում, ագրեսիայի տեսակ, որը կարող է լինել ֆիզիկական, հուզական կամ վերբալ և կարող է իրականանալ անմիջական շփման ընթացքում կամ հեռավար հաղորդակցման ընթացքում: Բուլլինգի տեսկաներն են՝

Վերբալ (խոսքային)Վերբալ բուլլինգը անձի թիրախավորումն է խոսքի միջոցով: Կիրառվում են ծաղրանքներ, վիրավորանքներ, անհարկի բառեր և արտահայտություններ: Այն ազդեցություն է ունենում անձի ինքնագնահատականին, անձի սահմաններին, գործունեության ձևերին և նրա կայնքում կարևոր այլ գործոններին: Վերբալ բուլլինգը նաև պարունակում է ազդակներ ֆիզիկական վնասման, սպառնալիքներ և հանգեցնում է խտրականության:

Ֆիզիկական: Բուլլինգի այս տեսակը ամենատարածվածն է ուսանողների շրջանում: Ֆիզիկական բուլլինգը անձի մարմնին, սեփականությանը, ընտանիքի անդամներին կամ հարազատներին հասցվող անմիջական վնասն է: Ֆիզիկական բուլինգը ներառում է հրել, թքել, հարվածել, ապտակել (ինչպես ձեռքով կամ ոտքով, այնպես էլ այլ որևէ առարկայով), սեփականության վնասում կամ ոչնչացում, օրինակ հագուստի, պայուսակի վրա գրառումներ անելը, գողություն, այլ մարդկանց կողի կամ վիճաբանության մեջ ներգրավելը:

Հուզական:Հուզական բուլինգի ընթացքում ազդեցություն է գործադրվում անձնի ինքնանզգացողության և ինքնաընկալման վրա: Այն հիմնականում արտահայտվում է նվաստացման, հեգնանքի կամ հրապարակավ

ծաղրանքի միջոցով: Կարող է իրականացվել անձի կողմից կիրառվող բառերի կրկնությամբ, նրան ամոթալի վիճակների մեջ գցելով, անհիմն քննադատելով:

Կիբերբուլլինգ: Տեղեկատվական հարթակների զարգացման հետ կապված բուլլինգը իրական կյանքից տեղափոխվել է սոցցանցեր:Կիբեբուլլինգն իրականանում է տեխնոլոգիաների կիրառման հետևանքով (բջջային հեռախոսներ, համակարգիչներ, պլանշետներ և այլն): Կիբերբուլլինգն արտահայտվում է հաղորդակցություններում, նամակներում, սոցիալական մեդիայում, ֆորումներում, խաղերում: Կիբերբուլլինգի ընթացքում ուղարկվում, հրապարակվում կամ կիսվում է մեկ այլ անձի համար բացասական, վնասակար, սխալ, կոպիտ տեղեկատվություն, ինչը կարող է նվաստացնել տվյալ անձին:

Ինտերնետային բռնությունը ոչ միայն տրամադրության անկման պատճառ կարող է հանդիսանալ, այլ հոգեբանական վնաս հասցնել, զրկել ստեղծագործական և արտահայտման ազատությունից և այլն:

Հարկավոր է ծանոթանալ աշակերտի կողմից օգտագործվող պլատֆորմներին, բացատրել նրան, թե ինչպես են փոխկապակցված առցանց և անցանց աշխարհները, և զգուշացնել նրան այն տարբեր ռիսկերի մասին, որոնց հետ կարող է բախվել համացանցում:

Պետք է համոզվե՛լ, որ աշակերտը գիտի՝ ինչ է բռնությունը և ինչը բռնություն չէ: Եթե երեխաները իմանան, թե ինչ է բռնությունը, կկարողանան ավելի հեշտությամբ նկատել այն՝ անկախ նրանից, դա պատահել է իրենց, թե մեկ ուրիշի հետ:

Բուլլինգի սոցիալական կառուցվածքը

Բուլլինգի սոցիալական կառուցվածքը ունի երեք բաղադրիչ՝ բուլլեր (ագրեսոր կամ բռնարար), զոհ և դիտորդներ (վկաներ): Խոսելով դիտորդների մասին, ովքեր էլ որ նրանք լինեն, գիտնականները նշում են, որ նրանց տիպիկ է մեղքի և սեփական անզորության զգացումը:

Բուլլերները (ագրեսորները) համոզված են, որ խշխելով ու ենթարկելով ավելի հեշտ է հասնել իրենց նպատակներին, նրանք հիմնականում ֆիզիկապես ուժեղ տղաներն են, ովքեր իմպուլսիվ են ու ագրեսիվ վարքագիծ ունեն: Բուլլեր կարող են լինել նաև այն աշակերտները, ովքեր երազում են լինել դասարանի լիդերները, կամ ցանկանում են ուշադրության կենտրոնում լինել, այդպիսիները փոխզիջումների չեն գնում:

Զոհի դերում կարող է հայտնվել ցանկացած երեխա: Սակայն ռիսկային գոտում գտնվում են հիմնականում.

1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները (ուսումնական դժվարություններ, աուտիզմ, ուշադրության պակաս և գերակտիվություն, առողջական խնդիրներ),
2. Ազգային / սեռական փոքրամասնություններին պատկանող երեխաները
3. Սովորողներ, ովքեր տանը հաղորդակցվում են այլ լեզվով, Ֆիզիկական / կառուցվածքային խնդիրներ ունեցող երեխաներ (գիրություն,ֆիզիկական խնդիրներ):[2]

Դպրոցական բուլլինգին հաճախակի խմբերով են մասնակցում:

[2]https://www.youtube.com/watch?v=bXZ_gGfAr8M

Դիտորդները բուլլինգում ներգրավված այն երեխաներն են, ովքեր վախենում են լինել զոհի փոխարեն, կամ ում համար թանկ են բուլլերի հետ իրենց հարաբերությունները, դաժան ծնողների երեխաները, անապահով ընտանիքների երեխաները, ովքեր պատժվելուց վախենում են, նրանք, ովքեր բուլլինգը ընկալում են որպես զվարճանք և այլն:

Հաշվի առնելով գոյություն ունեցող բռնության երեք կողմերը նախ և առաջ պետք է բարություն ու կարեկցանք սերմանե՛լ աշակերտի մեջ: Նույնիսկ եթե երեխաները բռնության զոհ չեն հանդիսանում, նրանք կարող են օգնել կանխել այն՝ իրենց հասակակիցների նկատմամբ հարգալից և բարի լինելով: Կամ եթե նրանք ականատես են լինում բռնությանը, ապա կարող են պաշտպանել տուժածին, առաջարկել աջակցություն:

Արդյունքների վերլուծություն

<<Բուլլինգ>> հասկացության, տեսակների, սոցիալական կառուցվածքի ուսումնասիրությունից հետո անցկացվեց հետազոտություն 6-րդ դասարանցիների շրջանակում անկետավորման մեթոդի հիման վրա (Տես հավելվածը):Հետազոտությանը մասնակցեցին 6-րդ դասարանի 54 աշակերտ:

Հարցվածներից գրեթե ոչ ոք չգիտեր <<բուլլինգ>> տերմինի նշանակությունը, սակայն ականատես էին եղել բռնության երևույթին: Բռնության նշված տեսակներից աշակերտների 48%-ը ականատես էին եղել հոգեբանական բռնության (ավելի շատ հանդիպող տեսակ՝ ծաղրել, անվանարկել), 38%՝ ֆիզիկական բռնության (առաջնային ընդգծելով հարվածել, վնասել, հրել ձևերը), 14%-ը՝ սեռական բռնության (նսեմացնել սեռական բառապաշարի, ժեստերի կիրառմամբ):

Դիագրամ 1 (Հարց 3)



Որպես բուլլինգի վայր աշակերտների 50% նշել է դպրոցը, մոտ 15 %-ը՝ փողոցը, բակը, 17%-ը՝ սոցցանցերը, 19%-ը՝ ամենուր:

Դիագրամա 2 (Հարց 4)



Իսկ որպես թիրախ հարցվածների 72%-ի կարծում է նա է, ով թույլ է, 15%-ը՝ ֆիզիկական/կառուցվածքային խնդիրներ ունեցող երեխաները, 6%-ը՝ ով իր կարծիքն ունի, իսկ 7%-ը նշել է այլ պատճառ տարբերակը:Դիագրամա 3 (Հարց 5)



Մեզ հետաքրքրող հարցերից մեկն այն էր, թե արդյոք ենթարկվել են բուլլինգի և ինչ վարքային դրսևորում են ունեցել դրանից հետո: 54 աշակերտներից յուրաքանչյուր 8-ը ենթարկվել է բուլլինգի: Փաստելով վստահության մթնոլորտի պակասը, մեծամասամբ նշել են, որ կիսվել են ընկերների հետ:

<<Դպրոց>> սոցիալական ինստիտուտում առավել նկատելի և հաճախադեպ է բուլլինգի երևույթև, իսկ մարդու անձի զարգացման և սոցիալականացման գործում անժխտելի է դպրոցի դերը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Այսպիսով, բուլլինգի թեման արդիական է բոլոր ժամանակներում, չնայած օրենսդրական դաշտում դեռ ամրագրված չի, սակայն հասարակության մերժողական դիրքորոշում ունի այս երևույթի նկատմամբ: Ինչպես արդեն նշել ենք, դպրոցն այն առաջնային օղակն է, որտեղ ինտենսիվորեն ձևավորվում են երեխաների սեփական անձի, կյանքի նպատակների և աշխարհի մասին պատկերացումները: Այս առումով, հանրակրթության որակը ոչ միայն կրթության հասանելիությունը, բովանդակությունը և պատշաճ նյութատեխնիկական բազայի առկայությունն է, այլև անվտանգ հոգեբանական միջավայրը, որտեղ աշակերտը զերծ է ցանկացած բռնությունից և հնարավորություն ունի լիարժեք օգտագործել իր անձի զարգացման այդ կարևոր տարիները: Հարկավոր է դպրոցում բռնության /բուլլինգի/ դրսևորումներին պատշաճ ուշադրություն դարձնել, դրանք ժամանակին հայտնաբերել, հարկ եղած դեպքում կիրառել մանկավարժահոգեբանական ամենատարբեր միջոցները՝ դրանք հաղթահարելու, կանխելու համար: Այս առումով չափազանց կարևոր է ուսուցիչների, աշակերտների, ծնողների և հասարակության տեղեկացվածությունը և մարդասիրական արժեքների սերմանումը: Ուսումնասիրելով դպրոցում բռնության /բուլլինգի/ դրսևորման ձևերը, դրանց կանխարգելման և հաղթահարման ուղիները՝ առաջարկում ենք.

1. Լուսավորչական աշխատանքներ դպրոցի անձնակազմի հետ բուլլինգի թեմայով:
2. Իրավիճակի վերահսկողություն և մշտադիտարկում, որի արդյունքում հստակ դուրս են բերվում իրավիճակում ներգրավված երեխաները՝ զոհը, ագրեսորը, դիտորդները և անհատական հանդիպումներ իրականացնել իրենց հետ:
3. Խորհրդատվական հանդիպումներ բոլոր ներգրավված երեխաների ծնողների հետ:
4. Դասարանի պատասխանատուների, առարկայական ուսուցիչների հետ մշտական քննարկումներ և խորհրդատվական զրույցներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Алексеева И. А., Новосельский И. Г. Жестокое обращение с ребенком.Причины. Последствия. Помощь.- М., Генезис, 2005 г., 256 с.
2. Бандура Л., Уолтерс. Р. Подростковая агрессия.- М. Апрель-пресс, ЭКСМОПресс, 1999 г., 65 с.
3. Василькова Ю. В., Василькова Т. А. Социальная педагогика, М. 1999 г., 154 с.
4. Волкова Е. Н. Проблемы насилия над детьми и пути их преодоления. Минск, 2008 г., 338 с.
5. Галагузова М. А., Галагузова Ю. Н., Штинова Г. Н., Тищенко Е. Я., Дьяконов Б. Социальная оедагогика, М., 2001, 416 с.
6. Журавлев А. Л. Психология совместой жизнедейственности малых груп и рганизаций, М., 2001,10 с.
7. Раттер М. Помощь трудным детям.- М. Апрель-пресс. ЭКСМО-Пресс, 1999 г., 135 с.
8. Мардахаев Л. В. Социальная педагогика, М., 2005, 272 с.
9. Мудрик А. В. Социальная педагогика М., 2000, 106с.
10. Эриксон Э. Детство и общество, 251 с.
11. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510
12. https://www.youtube.com/watch?v=bXZ_gGfAr8M

ՀԱՎԵԼՎԱԾ

Անկետա	6Բ,6Գ (54 աշակերտ)
1.Ականատեսեղելեմայնպիսիդեպքի,երբինչորմեկըճնշիմյ ուսին, բռնությունգործադրի:	
ա)այո, տեսելեմ	50
բ) ոչ, չեմտեսել	4
գ)այլպատասխան	–
2. Եթեայո, ապառորտեսակը	
ա)հոգեբանականբռնություն(նվաստացնել,հեգնել, ծաղրել, անվանարկել, արհամարել,շրջապատիցբացառել, բանբասանքներտարածելևայլն)	24
բ) ֆիզիկականբռնություն(հրել,թքել, հարվածել,գողանալ,վնասելպայուսակը,հագուստըևայ լն)	19
գ)սեռականբռնություն(ներգրավելսեռականբառապաշարի, ժեստերիկամբռնության կիրառմամբ,սեռականակնարկներուառաջարկներանել, սեռականոտնձգություն իրականացնել)	7

դ) Ինտերնետում(նամակներում, խաղերում,սոցցանցերում(կիբերբուլլինգ)աշակերտինծաղրել, վիրավորել,լուսանկարներտարածելևայլն):	-
3. Որտեղէավելիշատհանդիպում բռնությունը:	

ա) դպրոցում	27
բ) փողոցում, բակում	8
գ) սոցցանցերում, ինտերնետում	9
դ) ամենուր(վերըթվարկված պատասխանները)	10
4.Գիտեք,թեինչէնշանակում<<բուլլինգ>>:	
ա) այո	1
բ) ոչ	53
5. Ըստձեզ, ովէավելիհաճախենթարկվումբռնության (բուլլինգի):	
ա) նա, ովթույլէ	39
բ) նա,ովտարբերվումէնյուսներից (արտաքինով, ֆիզիկապես)	8
գ) նա, ովիրկարծիքունի	3
դ) այլպատճառ	4

6.Արդյոքդուքէլեքենթարկվելքուլլինգի:	
ա) այո	7
բ) ոչ	47
7.Եթեայո, ապահնչպեսեքվարվել:	
ա) չեքպատմելքուլլինգիմասին	1
բ) կիսվելեքընկերներիհետ	5
գ) դիմելեքուսուցչին	1
դ) այլտարբերակ	-